ԱՄՓՈՓԻՉ ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի III գումարման II նստաշրջանի արդյունքների մասին
(08.09.03թ. - 03.12.03թ.)

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի երրորդ գումարման երկրորդ նստաշրջանի ընթացքում գումարվել է 7 եռօրյա նիստ: Նստաշրջանից հետո՝ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ դեկտեմբերի 12-ին և 25-ին գումարվել է նաև 2 արտահերթ նստաշրջան:

Նստաշրջանի սկզբում հաստատված օրակարգում ընդգրկված էին 57 հարց, որը հետագայում լրացվեց ևս 53-ով: Նստաշրջանի օրակարգի 110 հարցերից 60-ը ՀՀ կառավարության նախաձեռնություններ էին, 38-ը՝ Ազգային ժողովի պատգամավորներինը, իսկ 2-ը ՀՀ կառավարության և Ազգային ժողովի պատգամավորների համատեղ նախագծեր:

Նստաշրջանի օրակարգի 29 պարտադիր և ըստ անհրաժեշտության քննարկվող հարցերից՝ 11-ը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ անհետաձգելի համարված օրինագծեր էին, 1-ը՝ ՀՀ Նախագահի առարկություններով և առաջարկություններով վերադարձված «ՀՀ ազգային անվտանգության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքը, ՀՀ միջազգային պայմանագրերի վավերացման հարցեր, ինչպես նաև օրենքներով նախատեսված պարտադիր քննարկվող այլ հարցեր:

Նստաշրջանի օրակարգի 110 հարցերից քննարկվել են 54-ը, որոնցից 9-ը ընդունվել են երրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ (8-ը կառավարության, 1-ը՝ պատգամավորների), 27-ը՝ երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ (11-ը կառավարության, 16-ը՝ պատգամավորների), 6-ը՝ երկրորդ ընթերցմամբ (5-ը՝ ՀՀ կառավարության; 1-ը՝ ՀՀ կառավարության և ԱԺ-ի պատգամավորների) և 12-ը՝ առաջին ընթերցմամբ (5-ը կառավարության, 7-ը՝ պատգամավորների):

Մերժվել են ՀՀ կառավարության ներկայացրած 3 նախագծեր: Դրանք են՝ «ՀՀ մաքսային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», որը, սակայն, հետագայում լրամշակվեց և դարձյալ ներկայացվեց ՀՀ ԱԺ-ի քննարկմանը), «Պետական գույքի մասնավորեցման 2001-2003 թվականների ծրագրի կատարման 2002 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքների նախագծերը:

Հեղինակների կողմից շրջանառությունից հանվեցին 6 օրենքների նախագծեր (1-ը՝ ՀՀ կառավարության; 5-ը՝ ԱԺ-ի պատգամավորների):

Ընդունված 36 օրենքներից 19-ը ՀՀ կառավարության նախագծեր էին, 16-ը ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներինը, որոնցից 1-ը՝ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» ՀՀ կառավարության և ԱԺ-ի պատգամավորների համատեղ ներկայացրած նախագիծ էր:

36 օրենքներից 9-ը մայր օրենքներ էին (5-ը ՀՀ կառավարության, 3-ը ԱԺ-ի պատգամավորների, 1-ը ՀՀ կառավարության և ԱԺ-ի պատգամավորների), իսկ 27-ը փոփոխություններ և լրացումներ արդեն գործող օրենքներում (18-ը ՀՀ կառավարության, 9-ը ԱԺ-ի պատգամավորների):

Ամբողջությամբ ընդունված 36 օրենքներից 18-ը ունեն ֆինանսատնտեսական ուղղվածություն, 6-ը՝ սոցիալական, բնապահպանական և մշակութային նշանակություն, 15-ը՝ իրավական դաշտից են, 10-ը վերաբերում են գիտության և կրթության ոլորտին:

ՀՀ 2004 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկումը մնաց անավարտ, որը շարունակվեց և ամբողջությամբ ընդունվեց ՀՀ կառավարության նախաձեռնությամբ գումարված արտահերթ նստաշրջանի ընթացքում:

Ամբողջությամբ ընդունվեցին նախորդ նստաշրջանի ընթացքում քննարկված, սակայն անավարտ մնացած 6 օրենքների նախագծեր (2-ը ՀՀ կառավարության, 3-ը ԱԺ-ի պատգամավորների, 1-ը ՀՀ կառավարության և ԱԺ-ի պատգամավորների համատեղ ներկայացրած նախագիծ):

Նախորդ նստաշրջանի ընթացքում I և II ընթերցմամբ ընդունվել և այս նստաշրջան են տեղափոխվել 11 նախագծեր, որոնք ԱԺ-ի III գումարման II նստաշրջանի ընթացքում այդպես էլ չքննարկվեցին՝ ամբողջությամբ ընդունելու համար:

Ազգային ժողովը՝

ա) քվեարկությամբ հաստատեց

- ՀՀ 2002 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվությունը.
- Արժեթղթերի շուկայի հանձնաժողովի 2002 թվականի գործունեության տարեկան հաշվետվությունը.
- Արժեթղթերի շուկայի հանձնաժողովի 2004 թվականի գործունեության տարեկան ծրագիրը.
- Արժեթղթերի շուկայի հանձնաժողովի 2004 թվականի գործունեության պետական նպատակային տարեկան ծրագիրը.
- ՀՀ Ազգային ժողովի Վերահսկիչ պալատի 2004 թվականի գործունեության տարեկան ծրագիրը.

բ) լսեց՝

- Կենտրոնական բանկի 2002 թվականի տարեկան հաշվետվությունը,
- ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2004 թվականի տարեկան ծրագիրը.

գ) քվեարկությամբ որոշում ընդունեց ստեղծել Ազգային ժողովի 3 ժամանակավոր հանձնաժողովներ: Դրանք են՝

- Օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների, վարկերի, դրամաշնորհների և մարդասիրական օգնությունների օգտագործման արդյունավետությունը ուսումնասիրող ԱԺ ժամանակավոր հանձնաժողով.

- «Հայխնայբանկում» ավանդադրված ՀՀ քաղաքացիների խնայողական ավանդները վերականգնելու և փոխհատուցելու հնարավորություններն ուսումնասիրող ԱԺ ժամանակավոր հանձնաժողով.

- Եվրոպական կառույցներին ինտեգրման հարցերով ԱԺ ժամանակավոր հանձնաժողով,

դ) փակ գաղտնի քվեարկությամբ ընտրեց՝

- Կիմ Բալայանին՝ Սահմանադրական դատարանի անդամ,
- Արթուր Ջավադյանին՝ Կենտրոնական բանկի նախագահի տեղակալ:

Ընդունված պատգամավորական նախագծերի մեջ առավել մեծ թիվ են կազմում ՀՀ Ազգային ժողովում կոալիցիան ներկայացնող պատգամավորների (Գ. Սահակյան, Լ. Մկրտչյան, Ս. Բալասանյան), ինչպես նաև Վ.Դալլաքյանի հեղինակած նախագծերը:

Ընդունված նախագծերից առանձնապես կարևոր են «Ձանգվածային լրատվության մասին», «Վիճակախաղերի մասին», «Այլընտրանքային ծառայության մասին», «Սահմանված կարգի խախտումով պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին», «Անվճարունակության (սնանկության) մասին», «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին», «Հրապարակային սակարկությունների մասին», «Տեղեկատվության ազատության մասին», «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքները:

Նստաշրջանի ընթացքում վավերացվեցին 35 միջազգային պայմանագրեր, որոնցից 18-ը տնտեսության բնագավառում համագործակցության մասին է, 11-ը՝ իրավական բնագավառում համագործակցության, 9-ը՝ պաշտպանության բնագավառում, 7-ը գիտության, կրթության, առողջապահության և բնապահպանության բնագավառում:

Նստաշրջանի ընթացքում 16 պատգամավորներ գրավոր հարցերով դիմել են ՀՀ կառավարությանը:

Նստաշրջանի ընթացքում 93 պատգամավորներ հանդես են եկել հայտարարությամբ, որոնցից 48-ը վերաբերել են կառավարության գործունեությանը: